№ 224 Դեկտեմբերի 16 (28) 1880 Դեկտեմբերի 16 (28) № 224

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են տղոցի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄՍՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից):

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3. ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: «Մեղուի» առաջնորդող յօդուածի առիթով: Պատասխան: Նամակ Ս. Պետերբուրգից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Անգլիա:—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ. — Բանասիրական: Դաւիթ Բէկ:

ՆԵՐՔՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԵՂՈՒԻ» ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

—

«Մեղու Հայաստանի» լրագիրը իր № 88-ի „Ազգութիւն և կրօն" վերնագրով առաջնորդող յօդուածում ձգտում է իբր թէ գիտնական տես կէտից քննելու այն հարցը, որ վերջի ժամանակ անվերջ պօլեմիկի նիւթ է դառել մեր պարբերական մամուլի մէջ: „Փաստ և գիտութիւն պէտք է լինեն վիճելու զէնքերը", աղաղակում է լրագիրը, երեւակայելով, որ իր հայեացքները գլխովին հիմնված են գիտութեան սկզբունքների, պատմական իրողութիւնների վրա:

Թէ որքան ճշմարիտ է «Մեղուի» իր վրա ունեցած կարծիքը և որքան ընդունակ է նա հանդիսանում հասկանալու պատմական իրողութիւնների միտքը և նրանցից իր տեղերում: Լեռնային բնութիւնը ներշնչում էր բնակիչների մէջ արութիւն և հետեւապէս ձգտումն դէպի ազատութիւն:

Յաւելին այն էր, որ հայոց մէլիքները մի ընդհանուր կապ չունէին միմեանց հետ: Շահերի տարբերութիւնը չատ անգամ առիթ էր տալիս նրանց մէջ թշնամական յարաբերութիւնների: Այս պատճառով նրանց ուժերը չէին միանում, որ կազմէին մի ամբողջութիւն և պատերազմէին հայրենիքի ընդհանուր թշնամու դէմ: Իւրաքանչիւրը իր գլուխն էր պահում: Եւ եթէ հարկը պահանջում էր, նրանցից ամեն մէկը պատրաստ էր միանալ թիւրքերի կամ պարսիկների հետ և ասպատակել իր հարեան հայ մէլիքի երկրները:

Մէլիքներից ոմանք անկախ դրութիւն էին պահպանում, իսկ ոմանք ստորադրված էին պարսից խաների իշխանութեան ներքոյ: Այս վերջինները իրանց դիրքը չը կորցնելու համար, ստիպված էին խոնարհվել խաների բոլոր պահանջներին, թէև այդ պահանջները լինէին վնաս հայ ժողովրդին, ստիպված էին կատարել նրանց կամքը, որքան և անիրաւ լինէր, ստիպված էին դառնալ նրանց ձեռքում բոլորովին անարգ մի գործիք: Եւ որովհետև պարսից շահերը իրաւունք ունէին մէլիքներին փոխելու, այստեղից առաջ էր գալիս խիստ կեղտոտ մրցութիւն, որով մէլիքները միմեանց տեղը յափշտակելու մտքով, անձնատուր էին լինում, խաներին հաճոյանալու համար, ամեն տեսակ վատութիւնների, մատնութիւններ էին անում, կաշառում էին նրանց ոչ միայն փողով, այլ ոմանք իրանց հարազատ աղջիկներն անգամ տալիս էին խանին: Բայց այս պսխներին պէտք է բացառութիւն համարել:

Կային աւելի խղճմտաւոր և ազդեցութիւն ունեցող մէլիքներ, որոնք ծառայում էին որպէս ամուր պատուար հայ ժողովրդի և խանի մէջ. դէնցիաների համար օգտաւէտ եզրակացութիւն դուրս բերելու,—այդ մենք կը տեսնենք այս բօպէին:

Ահա „Մեղուի" բերած պատմական իրողութիւնը:

Կաթոլիկ եկեղեցականութիւնը, միշտ ծառայելով պապական իշխանութեան շահերին, ամեն աեղ ձգտում էր խախտելու աէրութեան կազմուածքի միութիւնը: Դերմանիայում նա „հալածվեցաւ, բայց այնքան զօրեղ գտնվեցաւ և դիմադրեց, որ կատարելապէս չընկճվեցաւ": Ֆրանսիան տեսնելով որ նոյն եկեղեցականութիւնը ժողովրդի մէջ թշնամական յարաբերութիւններ է զարգացնում դէպի հանրապետութիւնը, մարտի օրէնքներով հալածեց կաթոլիկ կրօնաւորներին: „Համոզված պիտի լինենք—ասում է լրագիրը որ Ֆրանսիայի քաղաքագէտ անձինք փիլիսոփայական տեսութեամբ հասկանում են, որ իրանց վարմունքը կաթոլիկ կրօնաւորների դէմ բռնութիւն է. սոքա իրանց համոզմանց համաձայն են գործում... Մի՞թէ հանրապետութեան զեկավար անձինք ազատութեան թշնամի են, որ այդպէս մեղանչեցին կարծեաց և համոզմունքի դէմ: Ոչ նոքա ամենամեծ ազատամիտներն են և ազդասէրները:" Նրանք մեղանչեցին այդպէս, լրագրի ասածով, յանուն ազգային միութեան, որի համար բաւական չեն միայն լեզուի կապերը, այլ հարկաւոր են և բարոյական և համոզման կապեր:

Պատմական իրողութեան դէմ մենք ոչինչ հակառակ չենք կարող ասել, որովհետև նա կատարված բան է և ուղիղ: Ֆրանսիական կառավարութիւնը, որ հանրապետական պրինցիպով միշտ հանդիսանում է Քրանսիական ազգի կամակատարը, հալածեց բազմաթիւ կրօնական կոնգրեգացիաներ, որոնք ոչ միայն գործում են հակառակ հանրապետական գաղափարների, այլ և ամենաքաղաքակարգ ազդեցութիւն են ունենում ժողովրդի վրա, և հալածեց յանուն հանրապետական շահերի և ամենաբարձր բարոյականութեան:

Բայց բոլոր կուրեօզը բաղկանում է նրանում, որ „Մեղուն" գուցէ անդիտակցաբար բռնում է հալածված կրօնաւորների կողմը և նրանց պէս աղաղակում է՝ „Քրանսիան մեղանչեց խղճի և համոզմունքի դէմ:" Սեզ զարմացնում է այդ միտումը: Մի՞թէ մարդիկ լոգիկան թելադրում է յարգել ամեն մի կեղտոտ,լիրբ և անբարոյական համոզմունք, միայն այն պատճառով որ նա „համոզմունք է": Հիզուիտների, դոմինիկանների, կապուցինների և այլ բազմաթիւ „սուրբ հայրերի" օրդենները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամենասղզուելի անբարոյականութեան սերմարաններ: Նրանք կաշկանդում են մարդու կենդանի միտքը և հոգին, նրանք զարգացնում են ժողովրդի մէջ ամենաքաղաքակարգ մոլորութիւններ, նրանք կրթում են մանուկ սերունդը անբարոյականութեան հրէշաւոր սկզբունքների վրա, նրանց 70 տարիկան զառամեալ ներկայացուցիչները յափշտակում են իրանց վայրենի, անասնական վավաշուտ կրքերը եօթ տարեկան գառնուկ աղջիկների և աղաների վրա... Սրանց համոզմունքները պէտք է յարգէր Ֆրանսիան, սրանց խիղճը և կարծիքը հեռու էին պահում նրա անմիջական ազդեցութիւնը ժողովրդից և պահպանում էին նրան խանի հարստահարութիւններից: Մէլիքի ձեռքով էր հաւաքվում տուրքը և ամեն հարկեր, որ պէտք էր վճարել խանին: Մէլիքն էր վճռում իր ժողովրդի մէջ ամեն տեսակ դատեր և վիճեր: Եւ որովհետև նոյն իսկ խաները իրանց մէջ հաշտ չէին, ստիպված էին մէլիքների հետ լաւ վարվել, հակառակ դէպքում, մէլիքը կարող էր թողնել խանին և իր ժողովրդով անցնել նրա թշնամու մի ուրիշ խանի կողմը:

Հայաստանի այն մասը, որ այժմ ռուսաց պետութեանն է պատկանում, ռուսների տիրելուց առաջ, պարունակում էր իր մէջ զանազան միմեանցից անկախ խանութիւններ, որոնցից նշանաւոր էին՝ Ղարաբաղի, Գանձակի, Շամախու, Երեւանի և Նախիջեւանի խանութիւնները: Այդ խանութիւնները զանվելով անընդհատ թշնամական յարաբերութիւնների մէջ, կռիւը, կողոպուտը, արիւնհեղութիւնը, աւերմունքը երկրի մէջ միշտ անպակաս էին լինում: Խանութիւնները թէև պարսից պետութեան մի մասն էին կազմում, և խաները թէև նոյն պետութեան աւատական իշխաններ էին համարվում, բայց չատ անգամ օգուտ քաղելով Պարսկաստանի ներքին խռովութիւններից, կամ չահերի ստէպստէպ փոխվելուց, որից առաջ էր գալիս անիշխանութիւն,—խաները այդ ժամանակ ապստամբվում էին, և քիչ չէր պատահում, որ չահերը կամ նրանց զօրապետները ակարանային նուաճելու իրանց վասալներին: Եւ այսպէս, ներքին ու արտաքին իրողութիւնները պահպանում էին իրանց անխզելի կապը:

Եթէ աւելացնենք դրանց վրա օսմանցիների արշաւանքները, Կովկասի լեռնականների յարձակումները, կը տեսնենք, որ Հայաստանը այն ժամանակ ներկայացնում էր մի սարսափելի պատերազմական դաշտ, ուր առաւելապէս ծեծվողը, փչվողը և մաշվողը սարերը էր նոյն ազգը, որ մի ժամանակ այդ երկրի տէրն էր: Եւ այդ կռոտրածների մէջ հայ ժողովուրդը և հայ մէլիքները պէտք է պահպանէին իրանց գոյութիւնը...

Բ.

1722 թ-ին լեկզիների անագին բազմութիւն, խառն կովկասեան այլ լեռնականների հետ, արշաւանք գործեցին դէպի Աղուանից և Սիւնեաց երկրները, և ասպատակելով Նուխու, Շամախու, Գանձակայ գիւղերայքը, անցան մինչև Սեւանայ լիճը: Շամախու հայ իշխան Մուսա Բէկեանը կամեցաւ արգելել վայրենիների յարձակումը, բայց չը կարողանալով դէմ դնել նրանց ահագին բազմութեանը, ընկաւ կռիւի դաշտում: Վայրենիները յափշտակեցին բազմաթիւ գերիներ հայոց աղջիկներից, պատանիներից և մանկահասակ կընիկներից, որպէս վաճառք, օտար երկրներում ծախելու համար: Իսկ ծերունիների մեծ մասը կոտորեցին: Ցեղային մահմեդականները, օգուտ քաղելով այդ խռովութիւններից, իրանք էլ մի կողմից սկսեցին կողոպտել հայերին: Երկիրը սարսափի մէջ ընկաւ: Ազատվեցան նրանք միայն, որ թողեցին իրանց տունը, տեղը, կայքը և պատսպարվեցան լեռների, անտառների անմատչելի խորշերում: Այդ ժամանակ իր խումբերով վրա հասաւ Գուգարացոց (Մեծ Սղնախի) Յովհաննէս իշխանը, հաւաքեց ցրված հայերին, նրանց սիրտ և խրախոյս տուեց, և բաւական ուժ կազմելով, յարձակվեցաւ լեկզիների վրա: Թէև նրան յաջողվեցաւ մաքրել երկիրը այդ աւազակներից, յետ խլել աւարի մի մասը և կրկին ժողովուրդը բընակեցնել իր տեղում, այսուամենայնիւ, լեկզիները թողեցին Աղուանից և Սիւնեաց աշխարհներում բարբարոսութեան սարսափելի հետքեր:

ծի՞քը պէտք է նա սուրբ և նուիրական համարէր։

Այդպէս կարող են կարծել Բիւֆֆէ, Բրոլլի կամ Կոտոն ցնդած ծերունիները, և Կասսանեակ ու Բոդրի դԱսսոն անամօթ սկանդալիստները... Ցաւում եմ որ ,,Մեղուի'' ներկայացուցիչներին սրանց հետ համախոհ պէտք է համարել...

Ճշմարիտ ազգասիրութիւնը և ամենասեմ բարոյականութիւնը ստիպեց Ֆրանսիական կառավարութեանը արմատախիլ անելու ժողովրդի միջից նրա մնաւոր, բարոյական և քաղաքական կեանքի անհաշտ թշնամիներին։ Ֆրանսիան չը մեղանչեց, այլ կատարեց իր պարտքը։ Նա հալածեց անբարոյականութիւնը և դրանով գործեց մի բարձր բարոյական քաջութիւն։

Հարցնենք այժմ ի՞նչու համար է „Մեղուն" առաջ բերում այս ,,պատմական օրինակը։'' Անշուշտ նրա համար, որ անի հետևեալ համեմատութիւնը։ Մեր ազգի միութեան համար կաթոլիկ և բողոքական տարրերը նոյնքան վնասակար են, որքան կրօնական օրդէնները Ֆրանսիայում։ Ֆրանսիացիք հալածեցին իրանց թշնամիներին, մենք պէտք է հալածենք մեր թշնամիներին։ Բայց երեխան անգամ կարող է նկատել, որ այդ համեմատութիւնը անկարող և արուեստական է։ Այդտեղ անալոգիա չը կայ։ Կրօնական օրդէնները իրանց զբաղուելի շահերով և նիւթական ձգտումներով—թոյն են ազգային կեանքի համար.—ցոյց տուէք մեր բողոքական և կաթոլիկ տարրերի անբարոյականութիւնը, կամ վնասակար ազդեցութիւնը ազգի միութեան համար և այն ժամանակը պահանջեցէք որ հալածենք նրանց։

Հալածել անմեղ մարդուն չափազանց անիրաւութիւն է։ Հալածել բողոքականներին և կաթոլիկներին միայն այն պատճառով որ նրանք բողոքական են և կաթոլիկ—այդ կը լինի անհամբերողութիւն, այդ կը լինի սարսափելի յանցանք խղճի և համոզմունքի դէմ, այն ազնիւ պրինցիպի, որին յարգող է ձևանում ''Մեղուն''։

Գալով ,,Մեղուի'' յայտնած մտքին, թէ նրա հակառակորդները իբր թէ քարոզում են ,,կրօնական—բարոյական'' բաժանումն ազգի մէջ, այդ—ներեցէք ասել—մի կոպիտ զրպարտութիւն է։ Ցոյց տուէք այդ ուղղութեամբ մի յօդուած, մի նախադասութիւն, մի բառ և մենք ձեզ կը հաւատանք։ ,,Մեղուի'' հակառակորդ լրագիրը քարոզում է ոչ թէ բաժանումն, այլ միութիւն ազգի զանազան դաւանութիւններին պատկանող մասերի մէջ։ Այդ ձեզ կասի ամեն մէկը, ով որ դատում է ազատ անձնական կրքերից։ ,,Մեղուի'' հակառակորդ լրագիրը իր համախոհների հետ, հաշտվելով այն կատարված իրողութեան հետ, որ մեր եկեղեցու ծոցից դուրս են եկել մի քանի խմբեր, տեսնում է դրա մէջ մի երեւոյթ, որ ծնվել է պատմական հանգամանքների ազդեցութեան տակ և, հաւատարիմ մնալով խղճի և համոզմունքի ազատութեան պրինցիպին, քարոզում է սէր և միութիւն բոլոր դաւանութիւնների մէջ։ Ահա ինչում է բաղկանում ամենազնիւ բարոյականութիւնը՝ պարզ է այս տեղից, որ ,,Մեղուի'' բերած ,,պատմական փաստը'' ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ներելի և անմեղ ցանկութիւն՝ պարծենալ ընթերցողների առաջ իր գիտնական տեղեկութիւններով։ Մենք յարգում ենք լրագրի այն յատկութիւնը, որ նա հետաքրքրվում է իմանալու, թէ ինչ է պատահում աշխարհում, բայց ցաւում ենք, որ նրան չէ յաջողում պատահած իրողութիւններից դուրս բերել իր տենդենցիաներին պաշտպան եզրակացութիւններ։

Մոսկվա Ս. Դաղեանց

ՊԱՏԱՍԽԱՆ

Շատերը հարցնում են, թէ ի՞նչու ,,ԿԱՅԾԵՐԸ'' այս տարի չը տպվեցան, կամ ես ե՞րբ դիտաւորութիւն ունեմ ի լոյս ածելու այդ աշխատութիւնը։

Իմ յայտարարութեան մէջ ես սկզբից յայտնած էի, որ ,,ԿԱՅԾԵՐԻ'' տպագրութիւնը կը սկսվի այն ժամանակ միայն, երբ այդ գրքի բաժանորդներից ստացված գումարը կը ծածկէ տպագրութեան ծախքը։ Յաւելով պէտք է յայտնեմ, որ մինչև այսօր ստացված փողերը հազիւ թէ բաւական կը լինին բոլոր ծախքերը լրացնելու։

Այսու ամենայնիւ, չը կամենալով իմ յարգելի բաժանորդների համբերութիւնը ձանձրացնել և նրանց երկար սպասել տալ, ես, որքան կարելի էր, աշխատեցի փութացնել տպագրութիւնը։ Եւ որովհետև, բացի նիւթական պակասութիւնից, ինչ—ինչ պատճառներով թիֆլիսում այդ գրքի տպագրութիւնը անյարմար համարվեցաւ, իմ բարեկամները խորհուրդ տուեցին Մոսկվայում տպագրել տալ, ուր մամուլի պայմանները աւելի նպաստաւոր դրութեան մէջ են։ Այդ մասին ես արդէն բանակցութիւն եմ սկսել Մոսկվայի համալսարանի ուսանող պ. Գաբրիէլ Միրզոեանցի հետ, խնդրելով, որ յանձն առնէ տպագրութեան հոգսերը, և յուսով եմ, որ առաջիկայ տարվայ սկզբի ամիսներում գիրքը պատրաստ կը լինի։

Հարկ եմ համարում խնդրել պատուելի պարոններին, որոնք զանազան քաղաքներում յանձն են առել ,,ԿԱՅԾԵՐԻ'' համար բաժանորդներ գտնել, չուշացնեն ուղարկել իրանց մօտ ունեցած փողերը, որով աւելի ևս նպաստած կը լինեն գրքի շուտ հրատարակութեանը։

Բաֆֆի

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

4 դեկտեմբերի

Երեկ Նիկոլաեվսկի երկաթուղու գնացքով սլացաւ գնաց դէպի Կ. Պոլիս «Մշակի» գործունեայ աշխատակից Գր. Նիկողոսեան։ Մնաս բարեաւ ասելու համար նորա շուրջը հաւաքված էին նրա այն բարեկամները, որոնք կարող են գնահատել երիտասարդ գործիչի անսպառ էներգիան և այն հասարակական գործունէութիւնը, որը, թէպետ սկսվել է միայն երկու տարի առաջ, սակայն կարողացել է ունենալ այնքան առատ պտուղներ։ Էրզրումի գաղթականութիւնը խեղդելը, այս տարի Ցաճկաստանում սկսված սովը և այս տարվայ նրա աշխատակցութիւնը ռուս մամուլին—ահա այն երեք ասպարէզները, որոնց մէջը ճանաչել է հայ հասարակութիւնը «Մշակի» աշխատակցին իր իսկական պատկերի մէջ։ Ամենայն իրաւամբ «Մշակ» լրագիրը կարող է պարծենալ իրան յատուկ այն ձիրքով, որով նա կարողանում է բաց անել և հանդէս բերել այնպիսի ընդունակութիւններ, որոնք անշուշտ կը մնային կորուստի և անյայտութեան մէջ, եթէ նրան չը հանդիպէին։ Այո, «Մշակի» տեսութիւնը և հոտառութիւնը զարմանալի նուրբ է մանաւանդ մարդիկ ճանաչելու ու գնահատելու մէջ, վատորոյ կարծեմ չը սխալված լինել, եթէ թոյլ տամ ինձ անուանել Գր. Նիկողոսեանին, ինչպէս գրողին և հասարակական գործիչին, «Մշակ» լրագրի որդեգիր։ Ահա լրագրի և ազգի այդ համակրական որդեգիրը բաղդ ունեցաւ երէկ դիմել իր նուիրական նպատակին՝ գնալ Կ. Պոլիս և գարունքը բացվածին պէս ոտը դնել Հայաստան երկու դիտաւորութեամբ. նախ՝ ծանօթանալ անձամբ Հայաստանում ապրող ժողովրդի հետ Զէյթունից սկսած մինչև Վան և Մուշ, երկրորդ՝ ծանօթացնել ռուս հասարակութեան իսկական հայերի այն մաքուր և առատ յատկութիւնների ու կեանքի հետ, որոնց տեղ ռուսահայերը յայտնվել են իրանց միայն ամենազզուելի և կեղտոտ կողմերից. այս կը լինի թղթակցութիւնների միջոցով, որ կանէ ճանապարհորդը Հայաստանից, որչափ մեզ յայտնի է, մի քանի ամիս չարունակ։ Այս փափագն էր, որ բաժանեց մեզնից երէկ մեր թանկագին բարեկամին, որը տարաւ իր հետ բացի միւսներից և մի զառամեալ ծերունու օրհնանքը...

—Ի՞նչ յիշատակ ես տանում հետդ, որդիս, հարցրեց ծերունին Գր. Նիկողոսեանին։

—Ոչինչ, հայր, եղաւ ժպիտով պատասխանը,—մի ատրճանակ անձս պաշտպանելու համար, մի հաւատարիմ գրիչ և այս դիմացկան բոտֆօրտները, որոնց պիտի մաշեմ քարոտ լեռներում...

Սորանից յետո նրա պատկերը ծածկվեց մեր աչքից։ Ամենայն սրտից յաջողութիւն ժրաջան հայ երիտասարդին իր նոր ազգաշահ ասպարիզի մէջ...

Որչափ մեզ յայտնի է Գր. Նիկողոսեանը բացի «Голосъ»-ի մէջ իր աշխատակցութիւնը չարունակելուց, կը թղթակցէ ևս «Порядокъ» լրագրին, որ կը հրատարակվի նոր տարվանից Պ. Ստասիւլեվիչի ակնաւոր գրականական խմբով։ Բացի այդ, շատ հաւանական է, որ «Дѣло» ամսագրի մէջ էլ կերևան երբեմնապէս հայ հեղինակի խրօնիկները։

Գաս. Եաղուբեան

Անցաւ տագնապը, անցաւ կոտորածը, ժողովուրդը մոռացաւ բոլորը։ Կրկին սկսվեցաւ սովորական վշտալի կեանքը։

Բայց մի երիտասարդ չէր կարող մոռանալ այդ բոլոր գաղանային անգթութիւնները։ Նա տեսնում էր այն գեղեցիկ երկիրը, ուր անուշի ամրոցների փլատակները, ուր հոյակապ վանքերի բեկորները, ուր պալատների փչրանքները, ուր ամեն մի լեռ, ամեն մի գետ յիշեցնում էին նրան հայ մարդու վաղեմի փառքը։ Իսկ այժմ ինչ էր մնացել։—Մի սորուկ ժողովուրդ, որը, կարծես, յաւիտենական անէծքով դատապարտված, մի լաւ օր տեսնելու բախտ չունէր։ Նրա վաստակը ձեռքից խլում էին, նրան ամեն կերպ տանջում էին. նա մինչև անգամ իր կնոջ, իր դաւակների տէրը չէր։ Նա տեսնում էր հայ իշխաններին, որոնց պարսիկները մելիքներ էին կոչում, որոնց վրա էր դրված ժողովրդի հոգաբարձութիւնը, որոնք պէտք է սրբէին նրա արտասուքը և դարման տանէին խեղճ գիւղացու դառն ցաւերին։ Բայց միմեանց հետ անհաշտ, անվերջ թշնամութիւններով, այդ իշխանները աւելի իրանք էին ծանրացնում ժողովրդի սարկութեան լուծը։ Մատնութիւնը, միմեանց դաւաճանելը, միմեանց վնասելը, նրանց ամենօրեայ գործն էր, իսկ մէջ տեղում ոչնչանում էր ողորմելի ժողովուրդը։ Եւ եթէ կային նրանց մէջ այնպիսիները, որոնք ճշմարիտ սիրում էին ժողովուրդը, սիրում էին հայրենիքը և ցանկանում էին նրա թշուառ դրութեանը մի ճար անել, բայց ընդհանուր անկարգութեան, ընդհանուր ապականութեան մէջ նրանց եռանդը թուլանում էր, նրանց իղձը իրանց սրտում խեղդվում էր։

Երիտասարդը իր չորս կողմը տեսնում էր թէ հոգեկան և թէ բարոյական խորին դատարկութիւն։ Նա աչք էր դարձնում դէպի Էջմիածինը, դէպի ընդհանուր հայոց Մայր Աթոռը, այնտեղ ևս մի և նոյն անկարգութիւններն էր նկատում,—միաբանների մէջ երկպառակութիւն, կաշառք, մատնութիւն, դաւադրութիւն և ամեն ինչ, որ սուրբ չէ, որ անարդ է, որ զզուելի է.... Էջմիածինը այդ ժամանակ գտնվում էր օսմանցիների իշխանութեան ներքոյ։ Համադանցի Աստուածատուր կաթողիկոսը, խոյս տալով Էջմիածնի խռովութիւններից, ծածուկ թափառում էր Արարատայ գիւղերում։ Էջմիածնի աթոռը մնացած էր թափուր, որ պատճառ էր տալիս աւելի սաստիկ խռովութիւնների։ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը այդ ժամանակ զբաղված էր «Ֆրանկների» (հայ կաթոլիկների) խնդիրով։ Յովհաննէս «Կոլոտ» (կարճահասակ) մականուանեալ պատրիարքը արգելում էր հայ-կաթոլիկներին լուսաւորչականների եկեղեցիները յաճախել։ Հայ-կաթոլիկները դեռ առանձին եկեղեցի չունէին։ Կրօնական երկպառակութիւնները, Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի և լատինական եպիսկոպոսի մէջ մի կողմից, իսկ հայոց պատրիարգի մէջ միւս կողմից, պահում էին մայրաքաղաքի հայ ժողովրդին անընդհատ կռիւների մէջ։ Երուսաղէմի հայոց պատրիարգարանը զբաղված էր սուրբ Յակոբայ տաճարով. կռիւները յոյն և լատին աբեղաների հետ վերջ չունէին։ Այստեղ, Արարատեան նահանգում արիւն և արտասուք էր հոսում, իսկ այնտեղ զբաղված էին եկեղեցիներով...

Երիտասարդը իր չորսը չէր գտնում ոչ մի մխիթարական երևոյթ, բացի հայրենիքի լեռներից և անտառներից, որոնք, կարծես, խուլ կերպով ասում լինէին նրան. «Եկ, եկ, մեր գրկում քեզ համար լաւ տեղ կայ. բռնակալի ձեռքը այնտեղ մուտք չէ գործում...

Ո՞վ էր այդ երիտասարդը, ո՞վ էր այդ ցնորամիտը, որ այն ժամանակվայ ընդհանուր խռովութիւնների, ընդհանուր բարբարոսութիւնների մէջ, մոռացած իր անձը, միայն հայրենիքի, միայն ժողովրդի վրա էր մտածում։—Դա Գեղուազի իշխան Ստեփաննոս Վարթանէսեանն էր Շահումեան տնից։ Զրկված հայրենական ամրոցից, սիրաց լի վրէժխնդրութեան դառնութեամբ, նա իր երկու հաւատարիմ ծառաների հետ, ծըպտեալ կերպով թափառում էր Սիւնեաց աշխարհում։ Նա մտնում էր հայոց մելիքներին, յորդորում էր նրանց միաբանվել և ընդհանուր ապստամբութեամբ թօթափել խաների ծանր լուծը։ Բայց ամեն տեղ գտնում էր սառն անտարբերութիւն, անհոգութիւն և մինչև անգամ արհամարհանք։ Բարկութիւնը, յուսահատութիւնը երիտասարդի մէջ հասնում էր սոսկալի կատաղութեան, երբ տեսնում էր, որ հայերը չէին ցանկանում օգուտ քաղել մի ամենայարմար ժամանակից, երբ կարող էին ամեն դիւրութեամբ ազատվել պարսից բռնապետութիւնից։

Պարսից պետութիւնը այդ ժամանակ գտնվում էր իր օրհասականի մէջ։ Աւղանիստանի Ղանդահար քաղաքից Միւրվէյիսի որդի Միր-Մահմուդ-խանը, տիրելով Սպահան քաղաքին, գահնկեց արեց պարսից Ցիւսէյն շահին և ինքը նստաւ նրա տեղը։ Արևելեան Պարսկաստանը ընկաւ աւղանների իշխանութեան ներքոյ։ Այդ ժամանակ պարսից Հայաստանում համարեա անիշխանութիւն էր տիրում։ Թէև աթոռաղուրկ Ցիւսէյն շահի որդին, Շահ Թահմասը, լսելով աւղանների յաղթութիւնը, Մազանդարանում թաղաւոր դարձաւ և եկաւ, նստեց Թաւրիզ քաղաքում, բայց նա այն ատելեան թոյլ, աբրեցող և փոփոխամիտ մարդ էր, որ չուտով զզուեցրեց իր զօրապետներին, բոլորը հեռացան նրանից, և ինքը, շահ-Թահմասը, անօգնական մնալով, գնաց Աստապատ և գաղտնի ապաստան գտաւ Աստուածատուր անունով մի հայ իշխանի տանը։ Երևանի նահանգին այդ ժամանակ տիրում էին օսմանցիները։ Նրանք աւելի ցանկանում էին Հայաստանի այդ մասը հայ իշխանների ձեռքով կառավարել և նրանցից մի որոշեալ տուրք ստանալ, քան թէ պարսից խաների ձեռքը տալ։

Բոլոր հանգամանքները յաջողութիւն էին խոստանում։ Պարսից և Թիւրքաց արքունիքները սարսափելի խռովութեան մէջ էին։ Շահերի և սուլթանների գահերը, խաղաղդակների նման, անդադար մի ձեռքից միւս ձեռք էին անցնում։ Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ ամեն օր ծագում էին նոր ապստամբութիւններ, ամեն օր կազմվում էին նոր, անկախ իշխանութիւններ։ Միայն հայերը անշարժ էին, միայն հայերը իրանց ազատութեան վրա չէին մտածում։ Այդ սաստիկ խոցում էր Շահումեան իշխանների վերջին ժառանգի՝ Ստեփաննոսի սիրտը։ Ի՞նչ պէտք էր արած։ Բոլոր ժողովուրդներից աւելի տանջված, աւելի հարստահարված, աւելի թշուառ ազգը, հայը, ոչինչ չէր զգում։ Կարծես, հանգիստ, ապահով և վայելուչ կեանքի փափագը մեռած լինէր նրա մէջ։

Երիտասարդ իշխանը այդ կարծիքի հետ բոլորովին համաձայն չէր։ Ժողովուրդը հոգեպէս և բարոյապէս բոլորովին մեռած չէր։ Նրա սրտում դեռ մնացել էին հարուստ, կենդանի տարրեր. միայն պէտք էր ջերմացնել նրանց, պէտք էր բորբոքել, ուժ տալ, և ահա մի և նոյն սորկացած ժողովուրդը ոտքի կը կանգնէր հսկայի անձնավստահութեամբ։ Ստեփաննոսը գիտէր այդ բոլորը։ Նա հաւատում էր հայի տոկունութեանը։ Նա գիտէր, հայը որքան համբերող է, որքան տանող է բռնութեան լծի ծանրութեանը,

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այս համարից սկսում ենք տպել Բաֆֆիի «ԴԱՒԻԹ ԲԵԿ» անունով պատմական վէպը։

—

«Минута» լրագիրը լսել է որ եկող տարի կառավարութիւնը դիտաւորութիւն ունի հիմնել Թիֆլիսում մի բարձրագոյն դպրոց տեխնիկական, երկրագործական և հանքարանական բաժիններով։

—

«Голосъ» լրագիրը սաստիկ յարձակվում է «Московс. Вѣдом.» լրագրի դէմ, որովհետև այդ վերջին լրագիրը մի չատ անվայել յօդուած է գրել Մոսկվայի ուսանողների դէմ վերջին ուսանողական անկարգութիւնների պատճառով։

—

Փոքրիկ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ տուել է «Մշակին» այս տարի 32 բաժանորդ։ Այդ բաժանորդների մէջ կան մի քանի տիկիններ և օրիորդներ։

—

«Մշակի» խմբագրութիւնը ահա երեք տարի է, այն օրից երբ մեր թերթը ամենօրեայ դարձաւ, վճարում է «Միջազգային հեռագրական ընկերութեանը» տարեկան 1000 ռուբլի հեռագիրների համար։ Մինչև անգամ 1200 ռուբլի էինք վճարում առաջին տարին։ Նոյնքան և աւելի են վճարում տեղական ռուս լրագիրները, որոնք չատ թաթը վեց անգամ են հրատարակվում։ Բայց կայ մեզանում մի լրագիր, որ ոչինչ չէ վճարում, բայց տպում է ամենահետաքրքիր հեռագիրները այսպիսի առաջաբանով. «Թիֆլիսում ստացված են հետևեալ հեռագիրները» և այլն։ Դա գրականական պարզ գողութիւն է։ Ժողովրդական առածը ասում է «Ձին դաղէ, էշն ուտէ։» Այդ տեսակ վարմունքի դէմ կարելի է դատ սկսել ինչպէս մի գողութեան դէմ։

—

Նիկողայոս Ալիխանեանց, որ նորերումս հրատարակել է «Երուանդ Երկրորդ» ողբերգութիւնը, խնդրում է մեզ յայտնել որ իր գրուածքը հրատարակվեցաւ բազմաթիւ տպագրական սխալներով։ Դրա պատճառը այն է, ասում է հեղինակը, որ նա Մայկոպ քաղաքում լինելով, ստիպված էր տպագրել գիրքը Թիֆլիսում և յանձնել նրա տպագրութիւնը մի սրբագրողին։

—

Մեզ հաղորդում են Մեղրի գիւղից որ այդ գիւղի կանանց մասին «Մշակի» № 212 մէջ տպված լուրը բոլորովին սուտ է և զրպարտութիւն է։ Մեղեցիները կը ցանկանային, որ Թղթակիցը աւելի բարեխղճ կերպով վարվէր լրագրութիւնների հետ։

—

ՍՂՆԱԽԱՏ մեզ գրում են, որ նոյեմբեր ամսին Վ. Ելիսավետա աւանում վախճանվեցաւ ոմն Ստեփան Տէր-Մովսիսեան, որի մայրը նրան եկեղեցու գաւթում թաղելու համար, ընծայել է նոյն տեղի կիսաչէն մնացած ուսումնարանի կառուցումն աւարտելու նպատակով 300 ռուբլի։ Այս փողը յանձնված է գործակալ Սա. աւագ. քահանայ Տէր-Յակոբիանոսեանցին։ Տեսնենք, ասում է Թղթակիցը, երբ կը սկսվի դպրոցի շինութիւնը։

—

Դեկտեմբերի 7-ին Սղնախի թատրոնասէրները տուեցին երկու ներկայացումներ. մինը հայերէն, իսկ միւսը վրացերէն լեզուով։ Թղթակիցը ցաւում է որ թատրոնին համակրող և օգնող անձինք չատ քիչ են Սղնախում։ Դեկտեմբերի 8-ին նոյն քաղաքի Կլուբի դահլիճում կայացաւ ,,կենդանիների հովանաւորութեան ընկերութիւնը'' հիմնելու համար մի ժողով։ Ընտրվեցան նախագահ և քարտուղար։ Յունվարից ընկերութիւնը կը սկսի իր գործունէութիւնը։

—

Ներսիսեան դպրոցի մասին մեզ հաղորդում են հետևեալը։ ,,Դպրոցի վերակացուները բարեխղճաբար չեն վարում իրանց պաշտօնը, բացի մէկից։ Մեծ մասամբ նրանք կոպիտ և անվայել կերպով են վարվում աշակերտների հետ, փողոցային յիշոցներ տալով աշակերտներին։ Այդ խօսքերի ճշմարտութիւնը կարող է վկայել տեսչին պ. Գրիգոր Շահնազարեանց, որ տեսչի աչքնա կամ լրտես է դպրոցում։»

—

Այսօր, երեքշաբթի օր, Արծրունու թատրոնում կը լինի ամերիկական խումբի ներկայացումն նոր պրոգրամմայով։ Դարձեալ կը լինի զանգակների կոնցերտ։

ԸՐՏՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետաւեալ դատողութիւնները իրլանդական գործերի մասին։ Ինչպէս երևում է, անգլիական մինիստրների խորհուրդը դեկտեմբերի 2-ին գրական հեռաւանքներ չունեցաւ։ Դեկտեմբերի 3-ին Լոնդոնից ստացված մի շարք հեռագիրները ապացուցանում են, որ մինիստրները չը կարողացան համաձայնութիւն կայացնել։ Զեմբերլեն և Բրայտ մինիստրները սպառնում են հրաժարական տալ, եթէ կը գործադրվեն Ֆօրստերի պահանջած բացառական միջոցները և բացի այդ Անգլիայից զօրքերի նոր գունդեր են ուղարկվում Իրլանդիա։ Ստացված հեռագիրների ընդհանուր միտքը այն է, որ մինիստրների անհամաձայնութիւնը այնպիսի հարցի վերաբերութեամբ է պատահած, որ անկարելի է նրանց մէջ միաբանութիւն կայացնել։

Եթէ Իրլանդիա նոր զօրքեր ուղարկելու լուրը ճիշդ է, դրանից երևում է, որ Գլադստոն հակվում է Զեմբերլեն և Բրայտ մինիստրների կողմը։ Մինիստրութիւնը մինչև այժմ աշխատում էր զօրքերի օգնութեամբ պաշտպանել ամենքին, ումը վտանգ էր սպառնում։ Իրլանդիայի մէջ եղած զօրքերը առանձին յանձնարարութիւն ունեն։ Նրանք ուղարկված են պոլիցիայի ոյժերը մեծացնելու համար և կարող են գործել օրէնքների համեմատ։ Նրանք պէտք է պաշտպանեն կալուածատէրերին և նրանց կառավարիչներին։ Ակներև է ուրեմն, որ կալուածական շարժման ընդարձակվելու հետ զօրքերի թիւն էլ պէտք է աւելանայ, որպէս զի նրանք կարողանան ամեն տեղ գտնվել, որտեղ հարկաւոր կը լինեն։

Եթէ ընդունվէին Ֆօրստերի առաջարկած բացառական միջոցները, բոլորովին աւելորդ կը լինէր այդքան զօրքերի Իրլանդիա ուղարկելը։ Եթէ դադարեցնվէր անձնական ապահովութեան (Habeas corpus) օրէնքը, կառավարութիւնը աւելի քիչ զօրքերով կարող էր երկրի մէջ հանգստութիւնը վերականգնել։ Միտինգների արգելելը, շարժման առաջնորդների կալանաւորելը միանգամից կը փոփոխէին իրլանդական գործերի այժմեան ցաւալի դրութիւնը։

Բայց հէնց որ ժամանակաւոր հանգստութիւն կը տիրէր երկրի մէջ, պահպանողականները և չափաւոր ազատամիտները նորից կը պնդէին, որ կարիք չը կայ փոփոխել Իրլանդիայի մէջ այժմ գործող կալուածական օրէնքները և որ ամեն բան կարելի է առաջվայ պէս թողնել։ Ցայտնի է, որ Գլադստոն այդ համոզմունքը չէ բաժանում։ Նրա գործունէութեան նպատակներից մէկն էլ իրլանդացի գիւղացիների վիճակի բարւոքումն է, ուրեմն հասկանալի է նրա զզուանքը դէպի Ֆօրստերի պահանջած բացառական միջոցները, որոնց գործադրելը կուշացնի կալուածական վերանորոգութիւնների մտցնելը Իրլանդիայում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի։ Պաշտօնական հաղորդութիւն։ Թէպէտ եկամուտների հարկը քննվում էր 1879 և 1880 թուականների ընթացքում հարկային մասնաժողովի մէջ, բայց Ֆինանսների մինիստրը դեռ ոչինչ չէ վճռել։ Լրագիրների հաղորդած լուրերը յիշեալ հարկը մտցնելու մասին առհասարակ և մասնաւորապէս այդ հարկը տօկօսաբեր թղթերի եկամուտների վրա դնելու մասին պէտք է վաղաժամ համարել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 25 կ., երկրորդ 219 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 8 ր. 8 կ.։ Ռուսաց 1 ռուբլի Լօնդոնի վրա արժէ 24½ պէնս, Ամստերդամի վրա 124,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 208 մարկ 37 պֆ., Փարիզի վրա 258¼ ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է, բայց հանգիստ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի։ „Бирж. Вѣдом.“ լրագիրը հաղորդում է, որ Ֆինանսների մինիստրը վճռել է այլևս չը հրատարակել թղթադրամ, եկող տարվանից հետևաբար փոքրացնել նրա շրջաբերականութիւնը և դրա համար տարեկան 42 միլիոն է որոշված։ Նոյն լրագիրը լսել է, որ բիւդժետը կազմված է 100 միլիոնից աւելի դեֆիցիտով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի։ ,,Голосъ'' լրագիրը հաղորդում է, որ պետական բիւդժետի ազի հարկի վերացնելու պատճառով կրած ճեսաը փոխարինելու համար դիտաւորութիւն կայ արտասահմանեան ապրանքների մաքսահարկը 10% աւելացնել այժմեան եղածից, և ազի մաքսահարկը փոքրացնել 38 կոպէկից 20-ի։ Արտասահմանեան ապրանքների մաքսահարկի բարձրացնելը և ազից վերցրածի փոքրացնելը չեն վերաբերվում այն ապրանքներին և թիւրքաց և պարսից ազին, որոնք բերվում են կովկասեան ցամաք սահմանից Կասպեան երկրի հարաւային նաւահանգիստները և Աստրախանի նաւահանգիստը։ Արտասահմանեան ապրանքները մաքսային պահեստների մէջ դնելու համար ստացված վարձը դիտաւորութիւն կայ կրկնապատկել։

ԴՈՒԲԼԱՆ, 12 դեկտեմբերի։ Բօերները յարձակվեցին և բոլորովին ոչնչացրին 94-դ գնդի Պրիտորիա գնացող բաժինը։ 250 մարդուց 120 սպանված և վիրաւորված են, մնացածները գերի են առնված։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

այնքան չուտով պատրաստ է թօթափել այդ լուծը, եթէ հանգամանքները կը նպաստէին։ Միայն հայը զգոյշ է, հեռատես է, խորհող է, բայց չուտ վճռող չէ, և դրա մէջն է կայանում նրա բոլոր դանդաղկոտութիւնը։ Զգուշութիւնը նրա մէջ յանցաւոր երկչոտութեան կերպարանք է ստացել։ Նա երբէք չի սկսի մի գործ, եթէ հաւատացած չէ, թէ յաջողութիւնը իր կողմը կը լինի։ Ուր մի փոքր անզգուշութիւն, մի փոքր զոհողութիւն, մի փոքր խենթութիւն անգամ կարող էր մեծ գործ կատարել,—այնտեղ հայը խնայող է և խելացի։ Նա միշտ իրան հեռու է պահում անմիտ բաղտախնդրութեան ցնորքներից, և այդ, Ստեփաննոսի կարծիքով, վատ էր։ Նրա թէօրիան շատ պարզ էր. «կամ մեռնել, կամ լաւ ապրել»։ Ճնշված, հարստահարված, անապահով կեանքը նրան տանելի չէր։

Ստեփաննոսը մի ուրիշ բան ևս գիտէր։ Նա գիտէր, որ հայ ժողովուրդը կատարեալ ոչխարային բնաւորութիւն ունի. մէկը պէտք է առջևից գնայ, որ միւսները հետևեն նրան։ Բայց ով կարող էր լինել այդ «մէկը»։ Ո՞վ կարող էր առաջնորդել ամբոխին։ Նա դիմեց բոլոր հայ իշխաններին, բոլոր հայ մէլիքներին և ամենից սառն ընդունելութիւն գտաւ։ Նա չէր ճանաչում ժողովրդի այդ գլխաւորներից և ոչ մէկին, որ համակրէր իր մտքերին։ Իսկ ինքը։—Ինքը ինչ կարող էր անել։ Ժողովուրդը հեղինակութիւն էր պահանջում։ Ժողովրդի վրա ազդելու, նրան շարժելու համար պէտք էր փոքր ի չատէ նշանաւոր մարդ լինել։ Թէև ինքն էլ նշանաւոր մարդերի կարգից դուրս չէր, բայց ինչ կարող էր անել մի փառազուրկ իշխան, որի հայրենական ժառանգութիւնից մնացել էին՝ մի ձի և մի ձեռք զէնքեր միայն։ Գենուազի ամբողջ դաւառը, որ նրա հօրերին էր պատկանում, այժմ դարձել էր մի խանի սեպհականութիւն։ Իսկ ինքը անտուն, անտեղ, անօթևան թափառում էր երկրից երկիր, որպէս մի արկածախնդիր ասպետ, որին իշխան էին տալիս միայն այն պատճառով, որ նրանից վախենում էին։ Այս մտածութիւնների մէջ խորասուզված, երիտասարդը քշում էր իր ձին Ներքին Ագուլիսից դէպի Օրդուբաթ տանող ճանապարհով, և այնքան զբաղված էր իր մտքերով, որ կարծես, չէր նկատում անձրևի տարափը, որ մանր, փոշիանման կաթիլներով մաղվում էր նրա վրա։ Երեկոյեան խաւարը դեռ այնքան չէր թանձրացել, որ գժուար լինէր առարկաները որոշել։ Առջևում երևում էր խիտ այգիների մէջ թաղնված Օրդուբաթը։ Փոքր ինչ հեռու Արաքսը մի արծաթեայ ժապաւէնի նման ոլորվում էր ձորի միջով։ Գետի միւս ափի վրա Քամքուհ լեռան բարձր գագաթը կիսով չափ ծածկված էր մթին ամպերի մէջ։ Կայծակը շեշտակի կերպով ճեղքեց այդ ամպերը և նրան հետևեցին սաստիկ որոտ և դղրդիւն։ Կարծես, ամբողջ երկինքը թափ տուեցին և անձրևը միանգամից սկսեց հեղեղի նման թափվել։ Այդ ժամանակ միայն երիտասարդը արթնացաւ իր մտայուզութիւնից, քարշեց ձիու սանձը, ձին կանգնեց, և նա սկսեց բաց անել իր վերարկուն, որ կապած էր երիվարի գաւակի վրա։ Նա խնամքով փաթաթվեցաւ վերարկուի մէջ, ոչ այնքան իր մարմնին հոգ տանելու համար, որքան իր զէնքերը թրջվելուց պահպանելու համար։ Այդ միջոցին հասան նրա երկու ուղեկիցները, որ բաւական յետ էին մնացել։ Երիտասարդը դարձաւ դէպի նրանցից մէկը, ասելով.

—Ջումշուդ, դու գիտես քաղաքի որ փողոցումն է այն հրէայի տունը։

—Գիտեմ, պատասխանեց Ջումշուդը։

—Դէ, առաջ քշիր, մեզ տար ուղիղ դէպի այն կողմը։

Ջումշուդը իր ձին առաջ քշեց, երիտասարդ իշխանը հետևում էր նրան։ Եռեից գալիս էր իշխանի միւս ծառան՝ Աղասին։

Քամին հեռզհեռզ սաստկանում էր և մրրիկը աւելի սպառնալի կերպարանք էր ընդունում։ Գիւղացիները սարսափով քշում էին իրանց անասունները դաշտից դէպի տուն։ Լեռներից լսելի էին լինում հովիւների խառն աղաղակները։ Սաստիկ անձրևների ժամանակ հեղեղը այդ կողմերում սոսկալի էր. նա տանում էր իր հետ ոչ միայն մարդիկ և անասուններ, այլ ահագին քարաժայռեր, որ պոկում էր սարերի կուրծքից։

Բոլորովին մութն էր, երբ իշխանը մտաւ Օրդուբաթ քաղաքը։ Փողոցներում ոչ ոք չէր երևում։ Բոլոր դռները կողպված էին։ Անձրևը, թէև փոքր ինչ մեղմացած, բայց տակաւին մաղվում էր։ Անցնելով մահմեդականների թաղերը, նրանք մտան հայերի թաղը։ Այստեղ բնակվում էին հրէաները մի առանձին փողոցում։ Ջումշուդը իր ձին կանգնեցրեց տներից մէկի դրան հանդէպ, ցած իջաւ ձիուց և սկսեց դուռը բաղխել։ Երկար բաղխում էր նա, իսկ բաց անող չը կար։ Գիշերային այն տարաժամ պահուն հրէան հեշտութեամբ իր դուռը չէր բաց անի օտարականի առջև։ Կարծում էին, թէ ներսում մարդ չը կար։ Բայց դռան ճեղքերից ճրագի լոյս էր երևում։

—Կոտրեմ, հարցրեց Ջումշուդը։

—Չէ, ասաց իշխանը,—կարելի է բաց անեն, բաղխեցէք։

Ներսից լսելի էին լինում ոտքի ձայներ և մարդկային երկչոտ շշնջոց։

—Ես այս րոպէում բաց կանեմ, ասաց Աղասին, իր ձին մօտեցնելով տան պատին և կանգնելով ձիու թամբի վրա։ Պատը շատ բարձր չէր. ճարպիկ երիտասարդը ձեռքերով չանկռեց պատի անհարթ մակերևոյթը և կատուի արագութեամբ թռաւ կտուրի վրա։ Մի րոպէից յետոյ բակից լսելի եղաւ նրա ձայնը, որ վիճում էր տան տիրոջ հետ, պահանջելով դռան բանալին։

—Է՛յ... վայ... մի սպանիր... լսելի եղաւ հրէայի դառն հառաչանքը։ Երևում էր, նա մի քանի ապտակ կերաւ Աղասու ձեռքից։

Դուռը բացվեցաւ. չէմքի վրա յայտնվեցաւ հրէան ճրագը ձեռին։ Նա անդադար միւս ձեռքը քսում էր իր երեսին, կարծելով, թէ Աղասու մատները դեռ կպած էին այնտեղ։ Նա ինքն իրան մրթմրթում էր.

—Չի էլ ասում, որ աղան է գալիս... աղայի առջև ով կը փակէ իր դուռը... իմ տունը աղայի տունն է... անիծված... ախ, ինչ ծանր ձեռք ունի...

—Ես քեզ հազար անգամ ասեցի, պատասխանեց Աղասին,—բայց դու էլի չէիր ուզում բաց անել։

—Լաւ է, լաւ, խօսեց իշխանը վէր գալով ձիուց,—Հարունը լաւ մարդ է, նրան պէտք չէ ծեծել։

—Հա, այդպէս, քո հոգուն մատաղ, պատասխանեց հրէան, և դառնալով դէպի Աղասին էլի կրկնեց.— Ա՛խ, ինչ ծանր ձեռք ունի այդ անիծվածը...

Հրէան ծեծը ուտելուց յետոյ փափկացել, մոմ էր դարձել. նա ամեն կողմ ծալվում էր, գործ դնելով չողոքորթութեան բոլոր ձևերը։ Նա մի քանի րոպէի մէջ ձիերը տեղաւորեց իր տան բակում և հիւրերին հրաւիրեց մի և նոյն սենեակում, ուր ինքը իր կնոջ հետ ապրում էր։

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուկիայումը, Սիմէոնովկի փողոցի վրա, Հախվերդեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր՝ առաւօտեան ժամի 9—11. Նաւասարդեան—խիրուրգիական և վեներական (սիֆիլիտական) հ., Ռուդկովսկի—կանանց և ներքին հ., ժամի 11—1. Լունկեվիչ—աչքերի, վեներական և կաշուի հ., Շահազիզեանց—ներքին հ. ժամի 5—7. Պավլովսկի—ջղային, հոգեկան և ներքին հ., Ուշակով—երեխայոց հ., ծաղկահատութիւն առաւօտեան ժամի 9—11. Շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8—ընդհանուր բժշկական խորհուրդ (консультація): Գիշերապահ բժիշկը երեկոյեան ժամի 9-ցը մինչև առաւօտեան ժամի 7-ը: Ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ:

Վարձ՝ երթևեկ հիւանդներից ցերեկը—50 կ., գիշերը 1 ր.: Աղքատներին անվարձ բժշկական խորհուրդ և դեղ:

Հիւանդանոցումը բնակվում է բժիշկ Նաւասարդեանը:

Ընդէն վաճառվում է մեծադիր

ՕՐԱՑՈՑՑ

1881-Թ. Ռ.

Սկզբումն գեղաքանդակ պատկերք Ս. ԱՐԻՍՏԱԿԻՍԻ բոլոր օրն. հրշ. մկ. հմբ. դրուած են կարգաւ հանդերձ՝

ԾԱՂԻԿ ԸՆՏԵՆԵԱՑ

յաւելուածով ա. ա.

սկզբումն է գեղաքանդակ պատկերք ՍՈՎԵՏԱԼ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ

Գինն է մինչև 600 վ. 35 կոպէկ, իսկ նորանից բարձր 40 կ.

Փոքրադիր

ՕՐԱՑՈՑՑ

1881-Թ. Ռ.

հանդերձ երկու գեղաքանդակ պատկերաւ ՀԱՅԿԱԶՆ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՑ և Ս. Փ. Բ. Հ. եկեղեցին Ս. ԵԿԱՏԵՐԻՆԵԱՑ

Գինն է 10 կոպ.

Տփխիսումը ծախվում է պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցում.

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Բաց անելով իր բոլոր արդիւնաբերութիւնների պահեստը Սաժենայա կարգի վրա Կարավելովի տան մէջ, պատիւ ունի առաջարկել պապ. առևտրականներին և գործածողներին ամեն տեսակի կօշկատակի, ձիու, իւֆտի և օպօյկա կաշիների ապրանքներ, նոյնպէս և կօշկաշլինքներ, կօշկաներեաներ, թրջված կաշիներ, թամբի և մեքենաների կաշիներ: Նախվում են գործարանի գներով:

2—20

Նախվում է 234 քառակուսի սաժէն ՀՈՂ, ՆԻԿՈԼԱԵՎՍԿԱՅԱ փողոցի վրա, ՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑՈՅՑ ԴԻՄԱ ԲԱՐՁ: Յանկացողները կարող են դիմել ԿԱԶԱՄԱՐԱՐ ԱՐՏԻՄ ԳՈՒԳՈՒԼԵՏՆՑԻՆ, ՍՈԼՈԼԱԿԻ փողոց, տուն ՍՈՒՄԲԱՏՈՎԻ:

1—4 (2)

ՆԱՏԱԼԻԱ ՏԱՐԲԵԼՈՎՆԱ և ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԵՆԻԿՈԼՈՊՈՎՆԵՐԸ ՅԱՅՏՈՎ սրտի յայտնելով առաջինը իր որդու, իսկ երկրորդը իր եղբօր փոխ-գնդապետ ԱԲՐԱՀԱՄ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻ ՄԱՀՈՒԱՆ մասին, խնդարհարար խնդրում են ծանօթներին և բարեկամներին ներկայ գտնվել հանգուցեալի յուղարկաւորութեան հանդէսին դեկտեմբերի 18-ին ԱՌԱՒՕՏԵԱՆ ժամի 10-ին: Հանգուցեալին տանելու են իր բնակարանից ՍԱՐԱՋՈՎԻ տանը, Դօլգովինսկայա փողոցի վրա ՍՈՒՐԲ ՆՇԱՆ եկեղեցին, որ ոսկերիչների փողոցի մէջն է: Հանգուցեալի ԱՅՑԸ կատարվելու է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 6½ ժամին:

1—3

ПРОДАЕТСЯ

Посредствомъ **ТИФЛИССКОЙ АУКЦІОННОЙ** камеры 162 ящика **ТАБАКУ** и **ПАПИРОСЪ** съ **БАНДЕРОЛЯМИ, ГУРТОМЪ** или **ПОРОЗНЬ.** Продажа имѣетъ быть 18 декабря, съ 10 часовъ утра, въ **СКЛАДѢ бр. ТУТУНОВЫХЪ**, на Садовой улицѣ, домъ № 34.

3—5

Объ изданіи въ 1881 году

ГОДЪ **„ДОНСКОЙ ПЧЕЛЫ“** ШЕСТОЙ

ГАЗЕТЫ ПОЛИТИЧЕСКО-ЛИТЕРАТУРНОЙ.

Съ 1-го января 1881 года «Донская Пчела» будетъ издаваться по той-же программѣ, какъ издавалась въ предъидущіе пять лѣтъ, два раза въ недѣлю.

Газета эта въ настоящее время получила такую популярность, особенно въ При-азовскомъ краѣ, что не нуждается ни въ какой рекламѣ.

Подписная цѣна остается прежняя:

Съ доставкою въ Ростовѣ н.-Д.		*Съ пересылкою иногороднымъ.*	
На годъ	6 руб.	На годъ	7 руб.
» ½ года	3 „ 50 к.	» ½ года	4 „
» 3 мѣсяца	2 „	» 3 мѣсяца	2 „ 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается въ конторѣ редакціи «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону, на Большой Садовой ул., въ домѣ П. А. Теръ-Абраміанъ. Иногородные благоволятъ адресоваться: въ редакцію «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ гг. иногородныхъ подписчиковъ прислать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 20 декабря настоящаго года подписныя деньги за 1881 годъ, будетъ разосланъ безплатно, въ видѣ преміи «Донско-Азовскій» русско-армянскій календарь на 1881 годъ.

7—10

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԸՆԴԼԻՑԱԾՆ ՄԱԳԱԶԻՆԸ Ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պանդոկներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և շոկոլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ամանեղներ, դանակներ, գդալներ, թէյամանեներ, բաժակներ, թամբեր, գուլպաներ կանանց և աղամարդկանց, թաշկինակներ, մանկնոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ: Երծրունուզայլէրէում:

19—100

Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի՝ մամուլի տակից դուրս եկաւ պ. Ն. Սիմէօնեանցի աշխատասիրած հայոց դպրոցների համար ընդհանուր աշխարհագրութեան դասագրքերը, որոնք արդէն ընդունվել են ինչպէս Թիֆլիսի, նոյնպէս և գաւառների հայոց երկսեռ ուսումնարաններում և Ս. Էջմիածնի ճեմարանում:

Դասագրքերը վաճառվում են բացառապէս Կովկասեան գրավաճառանոցում Զ. Գրիգորեանցի:

Ա. տարի՝ Նախագիտելիք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 35 կ.

Բ. տարի՝ մասն ուսումնական և բնական (31 պատկերներով) 60 կ.

Գ. տարի՝ մասն քաղաքական (Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա) 60 կ.

Գումարով առնողին զիջումն կը լինի:

16—20

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

Բ. ՇԱՀՎԵՐԴԵՍՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

(Գօլովինսկի Պրոսպեկտի վրա, Աղեքսանդրեան այգու-մօտ)

Ընդունվում են, թէ տեղական, թէ ռուսաց և թէ արտասահմանեան պարբերական բոլոր հրատարակութիւններին, նոյն իսկ խմբագրատանց յայտնած գներով: Օտար տեղերից թող բարեհաճեն դիմել հիւսիսային հասցէով.

Въ Тифлисъ, въ газетное агентство В. Шавердова.

30—18

Պատիւ ունիմ յայտնելու ի գիտութիւն Աղէքսանդրապօլու պատուելի հասարակութեան որ ես շարունակ ստանում եմ կախէթու կալուածատէր իշխան Լոման Դաւիդիչ Ճավճավաձէի այգիներից ամենաընտիր և ամենայն տեսակ գինիներ և վաճառում եմ շիշը —30 կոպէկից սկսեալ մինչև 1 ռուբլ առանց ամանի, իսկ ինչ կը վերաբերի Բաղդասար Բաղդասեանցի յայտարարութեան, որով նա չէ կամենում պատասխանատու լինել այն գինիներու արժանաւորութեանց համար, որոնք վաճառվում են առաջ նորան և այժմ ինձ, երբեմն նորա գործակատարին, պատկանող գինետան մէջ, որ գտանվում է Աղեքսանդրեան փողոցում Պ. Ջիգրանեանցի տանը, ես միայն այսքանը պատիւ ունիմ յայտնելու պատուելի հասարակութեան, որ այդպիսի վարմունքը միայն Բաղդասար Բաղդասեանցի պէս վաճառականներին է վայել և որ իշխան Լոման Դաւիդիչ Ճավճավաձէի գինիքը նորա գովասանութեանց կարօտութիւն չունին. պատուելի հասարակութիւնը ինքը կարող է որոշել մեր երկուսիս վաճառած գինիներու արժանաւորութիւնը առանց գովասանական ճառերի, յայտարարութեան ձևերով ապած:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԼԱՂՈՎ

2—2

ԻՒԼԻՈՒՍ ԳՐԵՑԻ ՎԱՃՅԱՐԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՋՈՑ (դեղ) ՈՍԿՐԱՑԱՐԻ ԵՒ ԲԵՎՄԱՏԻԶՄԻ դէմ: Ամենալաւ օգնող միջոց է, որ կարելի է հեշտութեամբ և առանց յաւելի գործ դնել ամեն տեսակ ՈՍԿՐԱՑԱՐԻ ԵՒ ԲԵՎՄԱՏԻԶՄԻ դէմ, մանաւանդ մատների և ջղերի ցաւի և մարմնի զանազան մասերի կծկման դէմ, միակողմանի գլխացաւի (միգրէնի) դէմ, գլխի կծկման դէմ և մինչև անգամ ԿՐԿՆԱՎՈՐ ՋԵՐՄԻ դէմ, սրտի ափերի և կրծքի բորբոքման դէմ, ռեվմատիզմի հեռաւանքների դէմ նոյնպէս և արտասահմանեան ջրերից լաւացողների համար: Վկայականի միակ տէրը Լիլիուս Գրեց, Վիեննա, II Prater strasse № 49. Ծախվում է 4 ռուբլի գործածութեան խրատներով Ռուսաստանի բոլոր դեղատուների մէջ: Գլխաւոր պահեստը Մոսկվայի Ռ. Սեղեր և ընկ. խանութի մէջ, Նիկոլսկայա փողոցի վրա: Փոստային ծախսի համար 40 կ. է ուղարկվում:

2—25 (3)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հաւեմատեցէք թէյի ֆունտը			1 ր. 5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ			Ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	Ֆ. 3 ր.

14—100

ՆՈՐՈՒԹԻՒՆ ԵՐԿԱԹԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ Հագանց փափուկ և ձգուն նահալներով: Օրինակները կարելի է տեսնել Կանիշենայա փողոցի վրա, տուն Աբգուարինսկու, Կոնստանտինովայի բնակարանի մէջ, Մոսկվայի „Նիկոլայ Երենս և Ընկ.“ գործարանի հաւատարմատար Ի. Պետր. Պետրովի մօտ: Մի և նոյն տեղը ընդունվում են Երդհաշէջ մեքենաների և ուրիշ առարկաների Պատուէրներ: 50-ից ոչ պակաս մահճակալներ պատուիրող վաճառականներին Մեծ զիջումն է լինում:

6—9

Ծախում եմ ՏՆԵՐԻ ՇԻՆՈՒԹԵՆ համար ՀՈՂԻ ԿՏՈՐՆԵՐ, ինչ չափի էլ կամենայ գնողը, Մուշտայիի այգու միս կողմը. ՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ սկսած ՇԻՆՈՒԹԵՆ ՄՕՏ, իւրաքանչիւր քառակուսի ՍԱԺԷՆԻ ՀԻՆԳԻՑ մինչև ՎԵՑ ՌՈՒԲԼԻ: Հազար քառակուսի սաժէնից աւելի գնողներին իւրաքանչիւր քառակուսի սաժէնին 50 կ. ՕՋԻՋՈՒՄՆ Է լինում: ՓՈՂԵՐԻ ԿԷՍԻՑ ոչ աւելի վճարելը կարելի է ՈՒՇՇԱՑՆԵԼ տարեկան 8% վճարելով: Հարցնել Միխայլովսկայա փողոցի վրա № 123 ՏՆ տիրոջը: Կօլոնիայում:

7—8

Дозволено цензурою, Тифлисъ, 15 декабря 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.